ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մարտի 2025 թվականի № -Ա

«ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶՋԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔՈՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի մարտի 12-ի №54/ԱԱ գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Գործարանային 1/14 հասցեում գտնվող 70.41131 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունում «ԷՅՉ ԷՆԵՐՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» սահմանափակ պատասխանտվությամբ ընկերության օգտին գրավադրման և նույն գույքով «ԷՅՉ ԷՆԵՐՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համար երաշխավորություն ստանձնելու գործարքների կնքմանը,

բ) հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործարքների համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39-Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է**.

1. Համաձայնություն տալ Ընկերության կողմից վերջինիս պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Գործարանային 1/14 հասցեում գտնվող 70.41131 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունում «ԷՅՉ ԷՆԵՐՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության օգտին գրավադրման և նուն գույքով «ԷՅՉ ԷՆԵՐՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» սահմանափակ պատասխանտվությամբ ընկերության համար երաշխավորություն ստանձնելու գործարքների կնքմանը:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքների կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքների կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրերի պատճենները:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- մարտի 2025թ.